



PEARLS OF ARMENIAN HERITAGE

Սրբուհի Տիսաբ (1842-1901)

Սրբուհի Վահանեան-Տիսաբ հայ նոր գրականութեան անդրանիկ գրագիտուհին է: Նախապէս երոպամոլ, նոյնիսկ հայատեաց մը, կը հեզնէր հայ լեզուն ու գրականութիւնը, բայց Մկրտիչ Պէշիկթաշլեանի գրաւիչ ազդեցութեան տակ՝ դարձաւ սիրող հայրենի գրականութեան, լեզուին եւ բանաստեղծութեան:

Մայրը, Տիկին Նազը Վահանեան, ճանչցուած ազգանուէր գործիչ էր եւ դրոշմած էր իր դուստրին մէջ ազնիւ զգացումներ, հրապարակային գործիչ դառնալու սէր եւ ուղղութիւն: Այս ձեռնարկին մէջ՝ Տիսաբ վայելց նաեւ իր ամուսինին խրախոյսը, որ լայնօրէն կը թոյլատրէր անոր ձկտելու իր գաղափարականին:

Դպրոցասիրաց Ընկերութեան հիմնադիրը եղաւ, եւ դարձաւ հայ կիներու մէջ երեւելի անուն մը, եւ գնահատուած գրագիտուհի: 19-րդ դարու ընկերային գաղափարախօսութիւններուն բախումները կը ցլան Տիսաբի երեք վէպերուն մէջ:

Մայտա (1883), **Սիրանոյշ** (1884), եւ **Արաքսիա** կամ **Վարժուհի** (1887) Պոլսոյ հայութեան մշակութային աշխարհին մէջ մտցուցին բարոյագիտական եւ ընկերաբանական նոր հորիզոններ, որոնցմով շահագրգռուած էին բնականաբար անարդարութիւններու տակ հեծողները: Ասոնց մէջ գլխաւոր տեղը կը բռնէին կիները, որոնց վիճակը բարելաւելու համար Տիսաբ իր վէպերով կը բանաձեւէ ընտանեկան կեանքին փիլիսոփայութիւն մը՝ ազատական ընկերային կազմի մը մէջ, ուր կինը հաւասարապէս մասնակից է՝ այր մարդու կողքին՝ հրապարակային կեանքին:

Ազատելու համար բարի եւ պարկեշտ կինը այր մարդոց բռնապետական գերիշխանութենէն, Տիսաբ չի վարանիր չափազանցութեամբ տալու բարոյագիտական սկզբունքներ, դատաստաններ, դիտողութիւններ եւ խորհրդածութիւններ՝ կիներու եւ այրերու միջեւ ընկերային հաւասարութիւնը փաստելու համար:

Յայտնի կերպով կը տեսնուի անոր գործերուն մէջ ճիգը պոլսահայ ընկերութեան ամէնէն ժխտական բարքերուն դէմ պայքարի՝ զանոնք սրբագրելու համար; Սակայն տարուած է արեւմտեան ընկերութիւնը յուզող սկզբունքներէն, եւ անընտրողաբար ետեւէ է պարտադրելու ապաբարոյական եւ ապակրօնական գաղափարախօսութիւններու հետեւանքները միջին-արեւելեան մշակութային ամենեւին տարբեր մթնոլորտին մէջ: Կնոջ երջանկութեան եւ հոգեկան խաղաղութիւնը չի կայանար միայն սիրոյ մէջ, ինչպէս Տիսաբ կ'ուզէ, այլ կան նաեւ ուրիշ ազդակներ՝ բարոյական եւ կրօնական գետնի վրայ՝ որոնք երջանկութեան աղբիւր են որեւէ տառապեալ մէկու մը համար:

(Քաղուած Հ. Մետրոպ Վրդ. Ճանաչեանի “Պատմութիւն Արդի Հայ Գրականութեան” հատորէն)

